ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. III

21-րդ դարի մարտահրավերներ և հնարավորություններ

DEVELOPMENT OF ECONOMY AND SOCIETY:
Challenges and Opportunities of 21st Century

РАЗВИТИЕ ЭКОНОМИКИ И ОБЩЕСТВА:
вызовы и возможности 21-ого века

ՀՊՏՀ 27-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎ

2017 թ., նոյեմբերի 22-24

Երևան 2018

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65
Տ 778

Հրատարակվում է
ՀՊՏՀ գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհրդի նախագահ՝

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր

Խմբագրական խորհուրդ՝

ԴԻԱՆԱ ԳԱԼՈՅԱՆ - *ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., դոցենտ*
ՍՈՒՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ - *ՀՊՏՀ բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ԱՇՈՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ - *ՀՊՏՀ հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկան, տ.գ.դ., պրոֆեսոր*
ԽՈՐԵՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ գիտության և ասպիրանտուրայի բաժնի պետ, տ.գ.թ., դոցենտ*
ԱՇՈՏ ՍԱԼՆԱԶԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ ֆինանսների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ - *ՀՊՏՀ տնտես. ինֆորմ. և տեղեկ. համակ. ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ կառավարման ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ ակադ., տ.գ.դ., պրոֆեսոր*
ԳԱԳԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ - *ՀՊՏՀ պրոռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր*

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. 21-րդ դարի մարտահրավերներ և
Տ 778 **հնարավորություններ**: ՀՊՏՀ 27-րդ գիտաժողովի նյութեր / ՀՊՏՀ: - Եր.: Տնտեսագետ, 2018, 780 էջ:

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65

ISBN 978-9939-61-177-8

© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2018 թ.

ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Գիտաժողովի հարգելի՝ մասնակիցներ,

շնորհավորում եմ բոլորիս Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 27-րդ գիտաժողովի բացման առթիվ և ցանկանում եմ շնորհակալություն հայտնել գիտաժողովի բոլոր մասնակիցներին, ովքեր հետաքրքրություն են ցուցաբերել տնտեսության և հասարակության զարգացմանն առնչվող հրատապ հարցերի նկատմամբ:

Մեր համալսարանի տարեկան գիտաժողովները գեղեցիկ ավանդույթ են դարձել, բայց ես ուրախությամբ եմ նշում, որ դրանց կողքին այսօր առկա են մեր համալսարանի գիտական գործունեությունն արտացոլող այլ ձևաչափեր նույնպես: Հպարտությամբ եմ նշում, որ հետազոտական համալսարան դառնալու և մեր պետության տնտեսական կյանքին մասնագիտական մասնակցություն ունենալու իմ տեսլականը կամաց-կամաց կյանքի է կոչվում: Համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնի գործունեությունն այսօր տալիս է նշանակալի արդյունքներ. այստեղ ոչ միայն իրականացվում են հանրապետության տնտեսական արդիական հիմնախնդիրների վերաբերյալ հետազոտություններ, այլև կենտրոնի աշխատակիցները բուհի դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ, որպես փորձագետներ, հանդես են գալիս համապետական քննարկումներում:

Մինչ տարեկան գիտաժողովի կազմակերպումը գիտական սեմինարների ձևաչափերով հանդես եկան մեր ամբիոնները՝ շնորհանդեսներով ներկայացնելով իրենց ուսումնասիրության առանցքում առկա թեմաները: Այս ուսումնական տարվանից տրվեց գիտաուսումնական լաբորատորիաների մեկնարկը, ինչը գիտական դրամաշնորհներ, գիտաուսումնական խմբեր և գիտահետազոտական կյանքի աշխուժացմանը միտված այլ ձևաչափեր ներդնելու մեր մոտեցումների հրաշալի շարունակությունն է:

Համալսարանի տարեկան գիտաժողովը ես հատկապես կարևորում եմ ակնկալիքով, որ այն պետք է վեր հանի մեր հավաքական գիտական ներուժը, ցույց տա համալսարանում գիտական կյանքի որակական փոփոխությունը և դառնա հետագա գործունեության յուրօրինակ ուղենիշ: Այս գիտաժողովի հիմքում տնտեսության և հասարակության զարգացման հարցերն են, որոնք ի ցույց են դնում մեր դարաշրջանի մարտահրավերներն ու հնարավորությունները: Իսկապես, սրանք այնքան փոխկապակցված և կարևոր հարցեր են, որոնք չպետք է անտարբեր թողնեն տնտեսագետներին, չէ՞ որ չի կարող լինել հասարակական զարգացման որևէ մակարդակ՝ առանց կենսունակ տնտեսության:

Հուսով եմ, որ գիտաժողովը՝ իր բաժանմունքներով և կլոր սեղաններով, հնարավորություն կտա մասնագետներին ներկայացնելու իրենց մոտեցումները, բացահայտելու գիտաժողովի խորագրում արտացոլված թեման՝ իր բոլոր շերտերով և նրբություններով: Այնպես որ, արգասաբեր և աշխույժ աշխատանք եմ մաղթում Ձեզ:

Շնորհակալ եմ ուշադրության համար:

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր

Within the framework of the current article it has been intended to present the impact of monetarizatioan on the economic situation of Eurasian Economic Union member countries.

In particular, the role of monetary policy and its main areas, the environment of monetary sustainability and its impact on macroeconomic indicators was revealed. Monetary policy of Eurasian Economic Union member countries was reviewed and the data of monetary aggregates were presented. The monetization levels of Eurasian Economic Union member countries were calculated, which allows to compare the monetary aggregates and determine the extent to which the volume of cash flows is provided for the liquidity of GDP.

ՖԻՐՈՒԶԱ ՄԱՅԻԼՅԱՆ
Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ՀՊՏՀ

ԱՃՈՂ ՀԱՏՈՒՅՑԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՄՈԴԵԼՆԵՐՈՒՄ

Հիմնաբառեր. *տնտեսական աճ, մարդկային կապիտալ, աճող հատույց, նվազող սահմանային օգտակարություն, մարդկային կապիտալի իրացում*

Հոդվածում քննարկված է էնդոգեն տնտեսական աճի մոդելների էմպիրիկ հետազոտությունների արդյունքում դրսևորվող աճող հատույցի հիմնախնդիրը: Ներկայացված են այդ երևույթի հնարավոր պատճառներն ու տնտեսագիտական գրականության մեջ գոյություն ունեցող մեկնաբանությունները: Հեղինակը տնտեսական աճի մոդելների էմպիրիկ հետազոտությունների արդյունքում դրսևորվող աճող հատույցի բացատրության համար առաջարկել է նոր մոտեցում՝ հիմնված մարդկային կապիտալում կատարվող ներդրումների աճող հատույցի կանխադրույթի վրա:

Համաշխարհային տնտեսության զարգացման արդի փուլում առանձնակի նշանակություն են ստանում մարդկային կապիտալի ձևավորումը և իրացումը՝ որպես տնտեսական աճի կարևոր գործոններ: Աշխարհի բոլոր երկրների զարգացման մակարդակը, տեմպը և հեռանկարները գնալով էլ ավելի են կանխորոշվում կուտակված մարդկային կապիտալի մեծությամբ և որակով, քանզի XX դարի տեղեկատվական հեղափոխությունը նոր պահանջներ է ներկայացնում գիտելիքների գեներացման, փոխանցման, ներդրման գործընթացներին, և այս առումով, հետարդյունաբերական տնտեսության կարևորագույն ռեսուրս է դառնում մարդկային կապիտալը՝ որպես նոր գիտելիքի ստեղծող, փոխանցող և կիրառող: Դա իր արտացոլումը գտավ մարդկային կապիտալի տեսության, իսկ հետագայում նաև զարգացած երկրների տնտեսական քաղաքականության առաջնահերթությունների մեջ, որտեղ առանձնակի ուշադրություն է դարձվում կրթության, գիտության և առողջապահության զարգացմանը: Մարդկային կապիտալի ձևավորման վրա կատարվող ծախսերը սկսեցին ընկալվել որպես ներդրումներ, որոնք, ֆիզիկական կապիտալի համեմատ, ապահովում են ավելի մեծ հատույց: Ներկայումս գրեթե համընդունելի է դար-

ձել այն մոտեցումը, որ ներդրումները մարդկային կապիտալում կայուն տնտեսական աճի կարևոր աղբյուր են:

Վերջին տասնամյակների ընթացքում լայնածավալ հետազոտություններ են իրականացվում՝ միտված մարդկային կապիտալում ներդրումների և տնտեսական աճի միջև եղած կապի բացահայտմանն ու քանակական գնահատմանը: Սկսած նախորդ դարի 60 ական թվականներից՝ իրականացվեցին բազմաթիվ էմպիրիկ հետազոտություններ, որոնց հիմնական նպատակն էր Ռ.Սոլոուի մոդելի հավաստիության գնահատումն ու հետագա կատարելագործման ուղիների որոնումը: Տեխնիկական առաջընթացի էկզոգեն բնույթն ի սկզբանե եղել է մոդելի լուրջ թերություններից մեկը, որը հետագա ուսումնասիրությունների դրդապատճառ դարձավ և 1980-ական թթ. կեսերին ծագեցին տնտեսական աճի, այսպես կոչված, նոր տեսությունները, որոնք առայսօր բուռն զարգացում են ապրում: Այդ ժամանակաշրջանում իրականացված տեսական և գործնական հետազոտությունները բավական լայնածավալ էին, ընդգրկում էին աշխարհի գրեթե բոլոր երկրները և հիմնված էին վիճակագրական տվյալների հսկայական բազայի վրա: Արդյունքում պարզվեց, որ տարբեր երկրներում տնտեսական աճի պատճառները, տիպերը, տեմպերը և բնույթը էականորեն տարբերվում են միմյանցից, և ստացված արդյունքներն էլ իրարամերժ ու հակասական էին և չէին կարող բացատրվել նորդասական տեսության շրջանակներում՝ զուտ տնտեսական գործոններով: Այդ իսկ պատճառով շատ հետազոտողներ փորձեցին գնահատել տնտեսական աճի վրա ազդող բազմաթիվ այլ գործոններ, ինչպիսիք են կոռուպցիան (Mauro,1995), ժողովրդավարությունը (Barro, 1997), կրթությունը (Barro Lee, 1994), ֆինանսական շուկաները (Easterly (1997), Sala-I Martin, 1997), պետական ծախսերի դինամիկան (Kormendi Mequine 1985, Levine, Renelt 1992), եկամտային անհավասարությունը (Alensia, Rodrik 1994), քաղաքացիական ազատությունը (Barro Lee, 1994), պատերազմները (Easterly, Kremer, Pritchett, 1993) և այլն: Նշենք, որ որոշ հետազոտողներ քննարկում էին կրթության և տնտեսական աճի միջև եղած կապը (Barro, Lee և այլք), ինչը հետագայում մարդկային կապիտալի հաշվառմամբ տնտեսական աճի մոդելների ստեղծման հիմք հանդիսացավ: Նշված ժամանակակից էմպիրիկ հետազոտությունների արդյունքներն ամփոփեցին Վ. Իսթեռլին և Ռ. Լևինը՝[1] ներկայացնելով հետևյալ տիպային փաստերը (stylized facts).

- Տարբեր երկրների տնտեսական աճի մակարդակների տարբերությունները պայմանավորված են ոչ թե արտադրության գործոնների կուտակման մակարդակով, այլ ընդհանուր գործոնային արտադրողականությամբ:
- Երկար ժամանակահատվածում երկրների տնտեսական աճի տեմպերը զուգամետ չեն, ավելին՝ առկա է տարամիտում, տնտեսական աճը կայուն չէ. տարբեր երկրներում առկա են տնտեսական աճի տարբեր տիպեր, բայց կապիտալի կուտակման տեմպերը կայուն են և բավականաչափ հաստատուն:

[1] Easterly W., Levine R., It's Not Factor Accumulation: Stylized Facts and Growth Models: World Bank Working Papers. 2001. https://williameasterly.files.wordpress.com/2010/08/33_easterly_levine_ itsnotfactoraccumulation_prp.pdf

- Արտադրության բոլոր գործոններն աճում են միաժամանակ՝ փոխներգործելով և առաջացնելով արտաքին էֆեկտներ:
- Տնտեսական քաղաքականությունն ազդում է երկարաժամկետ տնտեսական աճի վրա:

Ըստ էության, նշված փաստերը վկայում են այն մասին, որ անհրաժեշտ է փնտրել տնտեսական աճի նոր բացատրություններ, մշակել նոր մոդելներ ու տեսություններ, որոնք համարժեք կլինեն տնտեսական իրականությանը: Այս առումով, հետաքրքրություն են ներկայացնում աճի էնդոգեն տեսությունները, որոնք տնտեսական աճի չբացատրվող փոփոխականը՝ Սոլոուի մնացորդը, փորձում են բացատրել այնպիսի գործոններով, որոնք կապված չեն գիտատեխնիկական առաջընթացի հետ: Նրանք կասկածի տակ են առնում կապիտալի նվազող սահմանային արտադրողականության դրույթը. այսինքն՝ ողջ տնտեսության մասշտաբով կարող է դրսևորվել մասշտաբից աճող հատույցը՝ պայմանավորված արտաքին էֆեկտներով: Արտաքին դրական էֆեկտների առկայությունն էնդոգեն տեսությունների կարևոր կանխադրույթներից է, որը դրսևորվում է հետևյալում.

1. արտադրական գործընթացում ընդգրկված աշխատողների ուսուցման արդյունքում (learning by doing) առաջացող արտաքին էֆեկտները գիտատեխնիկական առաջընթացի էնդոգեն բնույթի հիմնավորման կարևոր գործոն են,
2. արտաքին դրական էֆեկտները հակազդում են կապիտալի սահմանային արդյունքի նվազմանը՝ նպաստելով կայուն, երկարաժամկետ տնտեսական աճին,
3. արտաքին դրական էֆեկտների կարևոր առանձնահատկություններից է այն, որ գիտական, տեխնոլոգիական նորարարություններից ստացվող աճող հատույցը բաժին է ընկնում ոչ միայն այդ նորարարությունների հեղինակներին, այլև ողջ հասարակությանը:

Տնտեսական աճի նոր մոդելները, ընդհանուր առմամբ, արտացոլում են մարդկային կապիտալի կարևոր նշանակությունը տնտեսական աճի ապահովման գործում և առավել հիմնավորված են ներկայացնում երկրների զարգացման տեմպերի միջև եղած տարբերությունները՝ պայմանավորելով դրանք մարդկային կապիտալի մակարդակների միջև եղած տարբերություններով: Այդուհանդերձ, նշված բոլոր մոդելները զերծ չեն որոշ թերություններից: Նախ և առաջ՝ դրանք հիմնված են մարդկային կապիտալի նվազող սահմանային արտադրողականության կանխադրույթի վրա, ինչը չի ապացուցվում գոյություն ունեցող փորձնական տվյալներով: Էմպիրիկ տվյալները հերքում են նաև մասշտաբից կայուն հատույցի կանխադրույթը: Փորձագիտական տվյալները վկայում են երկարաժամկետ հատվածում աճող հատույցի փաստի մասին:

Կարծում ենք՝ նշված մոդելների գործնական գնահատման ժամանակ դրսևորված աճող հատույցը պայմանավորված է երկարաժամկետում հենց մարդկային կապիտալի աճող հատույցով, ինչը դրսևորվում է ոչ թե առանձին անհատների, այլ ողջ հասարակության կտրվածքով:

Հայտնի է, որ մարդկային կապիտալի կուտակմանը զուգընթաց դրա եկամտաբերությունն աճում է մինչև որոշակի սահման (ակտիվ աշխատանքային գործունեության

վերին տարիքային սահման), որից հետո կտրուկ նվազում է: Այսինքն՝ գործում է նվազող սահմանային հատույցի օրենքը: Բայց, կարծում ենք, որ նշված օրինաչափությունը բնորոշ է միայն միկրոմակարդակում մարդկային կապիտալում կատարված ներդրումներին: Այսինքն՝ երբ որպես ներդրման օբյեկտ են դիտարկվում առանձին մարդիկ: Եթե մակրոմակարդակով քննարկենք մարդկային կապիտալում կատարվող ներդրումները, ապա կարող ենք ենթադրել, որ դրանց վրա չի տարածվում նվազող սահմանային հատույցի օրենքը: Բանն այն է, որ մարդկային կապիտալն անընդհատ վերարտադրվում է, այսինքն՝ ապահովվում է սերնդափոխության կանոնավոր գործընթացը, ինչը հիմք է տալիս եզրակացնելու, որ մակրոմասշտաբով մարդկային կապիտալը չի ենթարկվում ֆիզիկական մաշվածության (կամ աննշան է մաշվում), և մարդկային կապիտալում կատարվող ամբողջական ներդրումները ապահովում են աճող, այլ ոչ թե նվազող հատույց, քանի որ մակրոմակարդակում մարդկային կապիտալն առանձին անհատների մարդկային կապիտալի պարզ հանրագումար չէ: Մարդկային կապիտալի ձևավորման և օգտագործման գործընթացն ինքնին առաջացնում է լուրջ դրական արտաքին էֆեկտներ՝ էքստերնալներ, որոնք ապահովվում են ոչ թե նվազող, այլ աճող հատույց: Վերջին տասնամյակների էմպիրիկ հետազոտությունների արդյունքները (Մ. Թոդարո, Փ. Ռոմեր, Ի. Բենհաբիբ, Մ. Շպիգել, Ռ. Նելսոն, Է. Ֆելպս, Գ. Բարո, Հ. Սելա, Գ. Մարտին և այլք) վկայում են այն մասին, որ տնտեսական աճի մոդելների փորձարկման ժամանակ գործնականում դրսևորվում է մասշտաբից կայուն կամ աճող հատույց: Այսպես՝ Մ. Թոդարոն նշում է, որ ամբողջ տնտեսության կտրվածքով աճի էնդոգեն մոդելների փորձարկումը բավարարում է նվազող հատույցի օրենքը, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ մակրոմակարդակում գործում է կապիտալի աճող հատույցը՝ պայմանավորված արտաքին դրական էքստերնալիաներով[1]: Փ. Ռոմերը նույնպես չի բացառում, որ ագրեգացված արտադրական ֆունկցիան կարող է դրսևորել մասշտաբից աճող հատույց, բայց դա հնարավոր է միայն գիտական նվաճումների և նոր տեխնոլոգիաների ներդրման արդյունքում[2]: Նշված հետազոտությունների արդյունքները թույլ են տալիս ենթադրել, որ աճող հատույցը պայմանավորված է ոչ թե ֆիզիկական, այլ մարդկային կապիտալի աճող հատույցով: Պարզապես, մարդկային կապիտալի աճող հատույցը հնարավոր է միայն ողջ տնտեսության կտրվածքով և երկար ժամանակահատվածի առումով: Բանն այն է, որ մարդկային կապիտալը օգտագործման ընթացքում ոչ միայն ինքնաճում, կատարելագործվում է, այլև փոխանցվում փորձի փոխանակման, վերապատրաստման և այլ ձևերով: Այսինքն՝ ապահովվում են լուրջ արտաքին դրական էքստերնալիաներ: Մարդկային կապիտալի աճող հատույցը ապահովվում է նոր գիտելիքների համադրման, կուտակման, ներդրման և փոխանցման մեխանիզմներով: Նշված օրինաչափության դրսևորման համար անհրաժեշտ է գիտելիքների կուտակում որոշակի «կրիտիկական» սահմանի վրա, որն ապահովում է տնտեսության թռիչքաձև զարգացում: Կարծում ենք՝ հենց դրանով էլ բացատրվում է աճող հատույցի փաստը՝

[1] Тодаро М. П., Экономическое развитие. Перевод с англ. под ред. Яковлева С. М., Зевина Л. З., М.: Экономический факультет МГУ, ЮНИТИ, 1997, с. 95.

[2] Romer P. M., Increasing returns and long-run growth, Journal of political economy, 1986, Vol. 94(5), p. 1013.

տնտեսական աճի մոդելների փորձարկման ժամանակ: Ն.Դ. Կոնդրատևն իր «Տնտեսական դինամիկայի հիմնախնդիրները» աշխատության մեջ նշում է. «Ընդհանուր աճը և զարգացումն անշրջելի են, քանի որ դրանց հիմքում գիտելիքի կուտակման անընդհատ գործընթացն է, որի վրա որևէ տնտեսական իրադրություն էական ազդեցություն չի թողնում: Ընդհակառակը, գիտելիքի կուտակման ինտենսիվությունը պայմանավորում է տնտեսական իրավիճակը՝ լուծելով տնտեսության զարգացման փուլերի հիմնախնդիրները, նպաստում է, որ տնտեսությունը երբեք մեկ անգամից ավելի չլինի միևնույն մակարդակում կամ փուլում»[1]:

Եթե միավորենք առանձին անհատների՝ մարդկային կապիտալում կատարված ներդրումները և դրանցից ստացվող հատույցը մակրոմակարդակում (մասնավոր և սոցիալական հատույցների հանրագումար), ապա երկրի մասշտաբով, երկար ժամանակահատվածի կտրվածքով, կստանանք մարդկային կապիտալ ներդրումներից ՀՆԱ կախվածության ֆունկցիա, որն ըստ էության կարտահայտի աճող հատույց: Ընդ որում, այդ աճող հատույցի կորը կարող է ունենալ խզումներ, որոնք պայմանավորված են գիտելիքների կուտակմամբ, որոնք հասնելով որոշ կրիտիկական սահմանի, հանգեցնում են գիտատեխնիկական հեղափոխությունների: Այս համատեքստում մեծ հետաքրքրություն է ներկայացնում գիտելիքի կուտակման և դրա գիտական հեղափոխության վերածման գործընթացի կորը՝ տնտեսական մեծ պարբերաշրջանների կորի համադրմամբ[2]: Այս հայեցակարգի շրջանակներում ենթադրվում է, որ տեխնոլոգիական տնտեսական հայտնագործությունների, արտադրության նոր մեթոդների ներդրման հիմք են գիտելիքի վճռորոշ զանգվածի ստեղծումը (գիտություն), տարածումը (կրթություն) և արդյունավետ կիրառումը: Եթե անվերարտադրելի ռեսուրսները նվազում են, ապա գիտելիքի ռեսուրսները, ընդհակառակը, մեծանում են: Նախորդ ժամանակահատվածի գիտելիքը ստանում է նոր կիրառություն՝ համադրելով նոր գիտելիքի հետ: Գիտելիքների արդյունավետ կիրառության համար անհրաժեշտ է լուրջ ներդրումներ իրականացնել մարդկային կապիտալում՝ համապատասխանեցնելով ողջ կրթական համակարգը նոր պահանջներին, ապահովելով մարդկային կապիտալում ներդրումներ իրականացնելու խթաններ (ընտանիքի, ֆիրմայի մակարդակով), ստեղծելով անհրաժեշտ նախադրյալներ մարդկային կապիտալի արդյունավետ իրացման համար: Այս շղթայի որևէ բաղադրիչի «անտեսումը» կարող է խախտել նոր գիտելիքների սինթեզման գործընթացը:

ФИРУЗА МАИЛЯН

ВОЗРАСТАЮЩАЯ ОТДАЧА В МОДЕЛЯХ ЭКОНОМИЧЕСКОГО РОСТА

Ключевые слова: *человеческий капитал, экономический рост, отдача от масштаба, инновационная экономика, модели роста, убывающая предельная*

[1] Кондратьев Н. Д., Проблемы экономической динамики, М.: “Экономика”, 1989, с.62.
[2] Գ.Ի.Վարդանյան, Գիտելիքահենք տնտեսություն, Եր., ՀՀ ԳԱԱ, «Գիտություն», 2008, էջ 137:

производительность, положительные экстерналии образования

В статье рассмотрены возможные причины возрастающей отдачи при эмпирической проверке моделей экономического роста с учетом человеческого капитала. Автором предложен новый подход к оценке роли человеческого капитала в экономическом росте стран. В частности, рассмотрена предпосылка возрастающей отдачи человеческого капитала.

FIRUZA MAYILYAN

ACCEDING EFFECT IN MODELS OF ECONOMIC GROWTH

Key words: *human capital, economic growth, return to scale, innovation economy, model of growth, decreasing marginal productivity and positive externalizes of education*

In this article were found out reasons of acceding effects of models of economic growth by using empiric test by considering the human capital. The author suggests a new way to value the role of human capital in the economic growth of countries. There were considered, particularly, premises of acceding effect of human capital.

ԿԱՐԻՆԵ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ՀՊՏՀ

ՀԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՓՈԽԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Հիմնաբառեր. *հարկային քաղաքականություն, բարեփոխումներ, հարկային համակարգ, ֆիսկալ գործառույթ, տնտեսության զարգացում, հարկային օրենսգիրք*

Հարկային քաղաքականությունը, որպես սոցիալ-տնտեսական քաղաքականության բաղկացուցիչ, սահմանում է ձևավորվող հարկային համակարգի նպատակները:

Տնտեսական բարձր աճն ապահովում է գործարարների ավելի մեծ եկամուտներ, որոնք, իրենց հերթին, ապահովում են ավելի մեծ հարկային եկամուտներ: Եվ հակառակը, տնտեսական աճի ցածր մակարդակը հանգեցնում է հարկերի ավելի ցածր մակարդակի և կառավարության կողմից տրամադրվող սոցիալական աջակցության և օժանդակության ավելի մեծ պահանջարկի:

Հարկային քաղաքականությունը, որպես սոցիալ-տնտեսական քաղաքականության բաղկացուցիչ, սահմանում է ձևավորվող հարկային համակարգի նպատակները: Հարկային քաղաքականությունն իշխանության և կառավարման մարմինների իրավական գործո-